ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

Կազմեց՝ Ռազմիկ Օհանյան - ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ

Կազմման հիմքը՝ ՀՀ կառավարության 02.08.2018 թ. № 878-Ն որոշման հավելվածի 15-րդ կետ, Պայմանագիր № 41 առ 06.10.2025թ.

Հաշվետու ժամանակաշրջան՝ 2026 թ. 1-ին կիսամյակ

Կազմման ամսաթիվը և վայրը՝ 06.07.2026 թ., ք. Երևան

Համաձայն վերոնշյալ պայմանագրի պահանջների հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Կազմել և շրջանառել եմ ՀՀ պետական մարմիններից և ՀՀ ԿԳՄՍ նախարարությանն համակարգի կազմակերպություններից ՀՀ ԿԳՄՍ նախարարությանն ուղղված՝ ներքին աուդիտին, ինչպես նաև նախարարության այլ գործառույթներին առնչվող գրությունների մասնագիտական պատասխաններ:

2. Կազմել եմ ներքին աուդիտի ծառայությունների տեխնիկական առաջադրանքները:

3. ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2026 թ. կարիքների համար ներքին աուդիտ ծառայությունների գնման նպատակով կազմել և ներկայացրել եմ թվով 4 գնման հայտեր:

4. ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2026 թ. կարիքների համար ներքին աուդիտ ծառայությունների գնման նպատակով, գնման գործընթացի կազմակերպման կարգին համապատասխան, ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները կատարողի ծառայությունների գնման հայտը նախագծողի պարտականությամբ, ընդգրկվել եմ պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված մասնագիտական խումբի (պատասխանատու ստորաբաժանման), ինչպես նաև գնահատող հանձնաժողովների կազմերում, կատարելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների համար նախատեսված գործառույթները:

5. Համապատասխան հանձնարարականներով, կատարել եմ պետական բյուջեի ծրագրերով ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը տրամադրված հատկացումների շրջանակներում համակարգի կազմակերպությունների ծախսերի և եկամուտների վերաբերյալ վերլուծություններ ու ուսումնասիրություններ, կազմել և ներկայացրել եմ այդ ուսումնասիրությունների վերաբերյալ կարծիք:

6. Մասնակցել եմ նախարարության համակարգման ոլորտի օրենսդրական ակտերի նախագծերի կազմման, այլ գերատեսչություններից ներկայացված նախագծերի վերաբերյալ կարծիքի ներկայացման աշխատանքներին, կատարելով համապատասխան ուսումնասիրություններ և վերլուծություններ:

7. Կատարել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի և ստորաբաժանման ղեկավարի այլ հանձնարարականները (ուսումնասիրությունների և վերկուծությունների կատարում, տեղեկանքների կազմում ու ներկայացում և այլն):

ՌԱԶՄԻԿ ՕՀԱՆՅԱՆ